

29.04.2009թ.

թիվ 1053/IV

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պարոն Արթուր Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Ազդագիր և հաշվետվություններ թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգի 4/04-ի բաժին V-ի գլուխ 20-ի պահանջները Ձեզ ենք ներկայացնում «Չարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության 2008թ. տարեկան հաշվետվությունը առ 31.12.2008թ. դրությամբ:

Առդիր՝ 71 թերթ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատված է՝
«Չարգացման Հայկական Բանկ»
բաց բաժնետիրական ընկերության
Տնօրենների խորհրդի «23» ապրիլի
2009թ. թիվ 15-01 որոշմամբ
Տնօրենների խորհրդի նախագահ՝

.....
Չ. Չանոյան



«ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
2008Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2009

ԳԼՈՒԽ 1.

«Չարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության 2008թ. գործունեության հիմնական արդյունքները

Մույն գլուխն ընդգրկում է «Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ 2008թ. ֆինանսատնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերլուծությունը, Բանկի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը, հիմնական ռիսկերի և անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Ընդհանուր արդյունքներ

«Չարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2008թ. գործունեության արդյունքներն արձանագրում են հիմնական ցուցանիշների նկատելի բարելավում:

ՀՀ բանկային համակարգի ակտիվ մրցակցային պայմաններում Բանկը մի շարք կարևորագույն ցուցանիշների գծով ցուցաբերել է բարձր արդյունավետություն: Մասնավորապես, համաձայն «Արմինֆո» գործակալության տվյալների, ակտիվների շահութաբերության (ROA) մակարդակով Բանկը համակարգում զբաղեցրել է 2-րդ տեղը, կապիտալի շահութաբերության (ROE) մակարդակով՝ 8-րդ տեղը, իսկ մեկ աշխատողին ընկնող շահույթի մակարդակով՝ 4-րդ, օպերատիվ արդյունավետության ցուցանիշով՝ 5-րդ և ծախսերի վերահսկման արդյունավետության ցուցանիշով՝ 7-րդ հորիզոնականները:

Բանկը 20.4 %-ով ավելացրել է ակտիվների ծավալները, ընդ որում, առավել գնահատելի է, որ նշված աճը ձեռք է բերվել եկամտաբեր ակտիվների հաշվին: Եկամտաբեր ակտիվներից արագընթաց տեմպերով աճել են վարկային ներդրումները /65.7 %-ով/ վարկատեսակների բազմազանեցման և տրամադրման տեխնոլոգիաների կատարելագործման արդյունքում:

Շնորհիվ տոկոսադրույքների ճկուն մարտավարության՝ պարտավորությունների կառուցվածքում զգալի աճ է ապահովվել, հատկապես, ժամկետային ավանդների գծով՝ 47.2 %:

2008թ. ապահովվել է Բանկի ընդհանուր կապիտալի աճն ինչպես ներքին՝ շահույթի, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին՝ ամբողջությամբ իրականացվել է Բանկի բաժնետոմսերի 13-րդ թողարկումը, որի արդյունքում կապիտալը համալրվել է 350.0 մլն դրամով:

Բանկի Կապիտալիզացիա

Բանկը 2008թ. ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում իրականացրել է բաժնետոմսերի հերթական՝ 13-րդ թողարկումը 350,0 մլն դրամի չափով: Ընդ որում, բաժնետոմսերը (թողարկվել են միայն հասարակ բաժնետոմսեր) տեղաբաշխվել են անվանական արժեքից բարձր՝ 6028 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց շուկայական արժեքով (5500 դրամի անվանական արժեքի դիմաց): Արդյունքում, կանոնադրական կապիտալը (ներառյալ հավելավճարները) նախորդ տարեվերջի նկատմամբ աճել է 8.3 %-ով: Ընդհանուր կապիտալի աճի վրա էլ ավելի մեծ ազդեցություն է թողել ընթացիկ տարվա շահույթի մեծությունը, որը կազմել է 747.2 մլն դրամ:

Ընդհանուր կապիտալի մակարդակը 2007թ. տարեվերջի նկատմամբ աճել է 23.1 %-ով և կազմել 5.79 մլրդ դրամ: 2008թ. տարեվերջի դրությամբ Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 5.37 մլրդ դրամ, իսկ կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 40.6 %, գերազանցելով ՀՀ կենտրոնական Բանկի

կողմից սահմանված նվազագույն ցուցանիշները, համապատասխանաբար, 0.37 մլրդ դրամով և 28.6 տոկոսային կետով:

Միջոցների ներգրավում

Բանկի ընդհանուր պարտավորությունները 2007թ. նկատմամբ աճել են 1.76 մլրդ դրամով կամ 19.0%-ով և կազմել 11.03 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է ժամկետային ավանդների ծավալային աճով, որը կազմել է 1.70 մլրդ դրամ կամ 47.2%-ով: Հաճախորդներից ներգրավված ցպահանջ միջոցների աճը կազմել է 0.32 մլրդ դրամ կամ 9.9 %-ով:

Ժամկետային ավանդների աճն ապահովվել է շնորհիվ Բանկի կողմից վարվող տոկոսադրույքների ճկուն մարտավարության (2008թ. ընթացքում պարբերաբար իրականացվել են ավանդների ներգրավված սկզբիներ շուկայական մրցունակ պայմաններով): Ժամկետային ավանդների արժույթային կառուցվածքում ՀՀ դրամով ներգրավված միջոցները կազմել են ընդհանուր ժամկետային ավանդների 40.5 %-ը, իսկ արտարժույթով ներգրավված միջոցները՝ 59.5 %-ը:

Միջոցների տեղաբաշխում

Բանկի ընդհանուր ակտիվները 2007թ. նկատմամբ աճել են 2.85 մլրդ դրամով կամ 20.4 %-ով և կազմել 16.82 մլրդ դրամ: Ընդհանուր ակտիվների աճն ամբողջությամբ պայմանավորված է վարկային պորտֆելի մեծությամբ, որը տարեվերջին կազմել է 10.39 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ աճելով 4.13 մլրդ դրամով կամ 65.7 %-ով: Ընդ որում, վարկերի տեղաբաշխումն ըստ տնտեսության ճյուղերի ունեցել է աճի միտում գրեթե բոլոր ոլորտներում:

Բանկի ներդրումները պետական արժեթղթերում կազմել են 1.2 մլրդ դրամ, որի 60%-ը բաժին է ընկնում մինչև 1 տարի ժամկետայնության պարտատոմսերին: Պետական արժեթղթերի միջին եկամտաբերության մակարդակը կազմել է 8.4 %, դյուրացիան 1.04 տարի:

Շահույթ, եկամուտներ և ծախսեր

Բանկի գործունեության առանցքային խնդիրներից մեկը շահութաբերության բարձր մակարդակի ապահովումն է:

2008թ. ֆինանսական տարվա արդյունքներով Բանկի շահույթը (մինչև հարկումը) կազմել է 938.75 մլն դրամ, նախորդ տարվա 971.58 մլն դրամի դիմաց: Ընդ որում, գործառնական շահույթի մեծությունը (զուտ տոկոսային եկամուտների և զուտ ոչ տոկոսային եկամուտների հանրագումարը) 2008թ. կազմել է 778.9 մլն դրամ, գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 43.4 մլն դրամով կամ 5.9 %-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից ստացված զուտ եկամուտը (զուտ վերադարձը) կազմել է 159.8 մլն դրամ, նախորդ տարվա համեմատ նվազելով 76.2 մլն դրամով կամ 32.3%-ով:

Գործառնական եկամուտներ

Հաշվետու տարում Բանկի տոկոսային եկամուտները կազմել են 1,635 մլն դրամ նախորդ տարվա համեմատ աճելով 501.2 մլն դրամով կամ 44.2 %-ով: Աճ է գրանցվել «աշխատող»՝ եկամտաբեր ակտիվների գրեթե բոլոր հոդվածների գծով («վարկային ներդրումներից ստացված տոկոսներ»՝ 467.9 մլն դրամ, «բանկերում և ֆինանսավարկային կազմակերպություններում ներդրված միջոցներից ստացված տոկոսներ»՝ 17.8 մլն դրամ,

«ռեպո պայմանագրերով ներդրված միջոցներից ստացված տոկոսներ»՝ 15.9 մլն դրամ, «կորպորատիվ արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ»՝ 13.9 մլն դրամ): Բացառություն են կազմում «պետական արժեթղթերից ստացված տոկոսներ» և «վարկային քարտերից ստացված տոկոսներ» հոդվածները, որոնց ծավալները նվազել են, համապատասխանաբար, 12.1 մլն դրամով և 3.5 մլն դրամով: Բերված թվերը վկայում են, որ տոկոսային եկամուտների գերակշիռ մասն ապահովվել է վարկային գործիքների շնորհիվ:

Բանկի կողմից 2008 թ ընթացքում ստացված ոչ տոկոսային եկամուտները կազմել են 354.5 մլն դրամ, որը պակաս է նախորդ տարվա ցուցանիշից 60.2 մլն դրամով կամ 14.5 %-ով: Նվազման հիմնական պատճառներն արժեթղթերի վաճառքից ստացված եկամուտներն են (նվազումը 34.5 մլն դրամ) և ստացված տույժեր/տուգանքները, որոնց գծով նվազումը կազմել է 48.7 մլն դրամ: Արժեթղթերից ստացված եկամուտների նվազումը պայմանավորված է Բանկի պորտֆելի ծավալային նվազման և արժեթղթերի շուկայում տոկոսադրույքների բարձրացման միտումներով, իսկ հաճախորդների ժամկետանց պարտավորությունների դիմաց գանձված տույժերի նվազումը կապված է նախկինում դուրս գրված վարկերի վերադարձի ծավալների հետ, որոնք, հասկանալի պատճառներով, 2008 թվականի ընթացքում 1.5 անգամ զիջել են 2007 թ ծավալներին:

2008թ. ընթացքում զգալի աճ է գրանցվել արտարժույթային գործառնություններից ստացված եկամուտների գծով, որոնց ընդհանուր գումարը կազմել է 172.2 մլն դրամ, նախորդ տարվա 115.5 մլն դրամի դիմաց (աճը 56.7 մլն դրամ կամ 49.1%-ով): Արտարժույթային եկամտային հոդվածներն ունեցել են հետևյալ միտումները՝ «ածանցյալ գործիքներից ստացված եկամուտները» կազմել են 61.8 մլն դրամ, «արտարժույթի առքուվաճառքից եկամուտները» կազմել են 152.3 մլն դրամ և «արտարժույթի վերագնահատումից եկամուտները» կազմել են -41.9 մլն դրամ: Նշենք, որ ածանցյալ գործիքների և վերագնահատման հոդվածները պետք է դիտարկել միասնական, քանզի ածանցյալ գործիքները Բանկը հիմնականում օգտագործել է սփոթ դիրքերը հեջավորելու նպատակով, ուստի մի հոդվածով ստացված վնասներն առավել քան փոխհատուցվել են մյուսից ստացված եկամուտների հաշվին (երկու հոդվածների գումարային մեծությունը կազմել է 19.9 մլն դրամ, նախորդ տարվա 12.3 մլն դրամի դիմաց):

Գործառնական ծախսեր

Բանկի տոկոսային ծախսերը հաշվետու տարում կազմել են 514.5 մլն դրամ, գերազանցելով նախորդ ֆինանսական տարվա ցուցանիշը 245.0 մլն դրամով կամ 90.9 %-ով: Ծախսերի նման աճը հիմնականում պայմանավորված է ժամկետային ավանդների ծավալների (նախորդ տարվա համեմատ ավանդային պորտֆելի միջին մեծությունն աճել է 1.8 մլրդ դրամով) և ավանդային տոկոսադրույքների աճով (պորտֆելի միջին տոկոսադրույքը նախորդ տարվա համեմատ աճել է 2.1 տոկոսային կետով): Հարկ է նշել, որ ներգրաված միջոցների և դրանց հաշվին տեղաբաշխված վարկերի ծավալային աճը հանգեցրել է զուտ տոկոսային եկամուտների կտրուկ ավելացմանը՝ 256.1 մլն դրամով կամ 29.6 %-ով:

Ոչ տոկոսային ծախսերի գծով Բանկը հաշվետու տարվա ընթացքում շարունակել է վարել զսպողական քաղաքականություն: Նախորդ տարվա համեմատ Բանկի ոչ տոկոսային ծախսերի ծավալն ավելացել է 152.5 մլն դրամով կամ 28.1 %-ով, որի հիմնական պատճառը 2008թ. տարեսկզբին Բանկի աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերի բարձրացումն է, ինչն ավելացրել է Բանկի ծախսերը 113.8 մլն դրամով

(ներառյալ սոցիալական ապահովագրական վճարները): Աճի միտում են ունեցել նաև մի շարք այլ հոդվածներ, մասնավորապես, «ամորտիզացիոն մասհանումներ» - աճը՝ 19.3 մլն դրամ (աճել են Բանկի ներդրումները տեխնոլոգիական ոլորտում), «վճարված միջնորդավճարներ» - աճը՝ 14.4 մլն դրամ (պայմանավորված է քարտային գործառնությունների ծավալային աճով և թղթակից բանկերի սակագների փոփոխությամբ), «հիմնական միջոցների վարձակալության վճարներ» - աճը՝ 9.4 մլն դրամ (պայմանավորված է մասնաճյուղերի տարածքների վարձակալությամբ), «աուդիտային և խորհրդատվական ծախսեր» - աճը՝ 9.0 մլն դրամ (պայմանավորված է նոր ներդրված հաշվապահական հաշվառման ծրագրի սպասարկմամբ):

Հիմնական ռիսկերի նկարագիրը

Բանկում մեծ ուշադրություն է դարձվում ռիսկերի գնահատմանը և կառավարմանը:

Բանկային ռիսկերից առավել կարևորվում են հետևյալ հինգ խմբերը.

- վարկային,
- իրացվելիության,
- տոկոսադրույքների փոփոխման,
- արտարժույթային,
- գործառնական:

Վարկային ռիսկ

2008 թվականը առանձակի նշանավորվել է վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացումով, մասնավորապես, 2008 թ-ի ընթացքում վերանայվել է «Վարկային քաղաքականությունը», որով ոչ միայն նորովի սահմանվել են Բանկի վարկավորման նպատակային շուկաները, վարկատեսակները, վարկային պորտֆելի նպատակային կառուցվածքը, այլև սահմանվել են Բանկի վարկային պորտֆելի կենտրոնացումների սահմանաչափերը՝ նպատակ ունենալով առավելագույնս զսպել վարկային պորտֆելի կենտրոնացման ռիսկը, այնուհետև, ներդրվել է վարկառուների /ֆիզիկական անձանց/ վարկունակության գնահատման /սքորինգի/ համակարգը: Աստիճանաբար սահմանվում են յուրաքանչյուր վարկատեսակի տրամադրման և սպասարկման ընթացակարգերը, որոնք կոչված են անհատապես նախանշելու յուրաքանչյուր վարկատեսակի մոնիտորինգի առարկան և վերջինիս իրականացման պարբերականությունը՝ ևս մեկ անգամ զսպելով առանձին վարկերի ժամկետանց դառնալու ռիսկը: Իրականացվել է նաև կառուցվածքային փոփոխություն՝ Վարկավորման և ներդրումների վարչության կազմում՝ առանձնացնելով մոնիտորինգի և վերլուծությունների խումբը:

Իրացվելիության ռիսկ

2008 թ-ի ընթացքում Բանկն ունեցել է իրացվելիության բավարար մակարդակ և իր պարտատերերի օրինական պահանջները ճիշտ ժամանակին բավարարելու որևէ խնդրի հետ չի բախվել: Ավելին, Բանկը գրեթե մշտապես ունեցել է իրացվելիության որոշակի ավելցուկ իր ներքին նպատակային ցուցանիշների նկատմամբ (ներքին ցուցանիշները սահմանված են՝ ընդհանուր իրացվելիություն 18%, ակնթարթային իրացվելիություն՝ 80%), ինչի արդյունքում ընդհանուր իրացվելիության տարվա միջին ցուցանիշը 6.5 տոկոսային կետով

գերազանցել է իր նորմատիվային մեծությունը, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշի գերազանցումը կազմել է 28.8 տոկոսային կետ: Տարվա ընթացքում կատարված սթրես թեսթերը վկայել են այն մասին, որ Բանկի ցպահանջ միջոցների և ֆիզիկական անձանց ավանդների 10 %-ով հանկարծակի նվազման դեպքում, Բանկն ունակ կլինի պահպանել իրացվելիության ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային ցուցանիշները:

Տոկոսադրույքի ռիսկ

Տարվա ընթացքում տոկոսադրույքի ռիսկի մեծությունը գտնվել է ցածր մակարդակի վրա: Այսպես 90-օրյա և 180-օրյա GAP-երի հարաբերությունը կապիտալին ամսվա վերջին օրերի դրությամբ տարեկան միջինում կազմել են 11.3 % և 12.5 %՝ չգերազանցելով իրենց 20 % և 30 % նպատակային մակարդակները: Ցածր ռիսկայնության մասին է վկայում նաև շուկայական տոկոսադրույքների երկու տոկոսային կետով փոփոխության սթրես թեսթերը, որոնց արդյունքում առաջիկա երեք և վեց ամիսների ռիսկի մեծության տեսակարար կշիռն ընդհանուր կապիտալում չի գերազանցել համապատասխանաբար 0.15 % և 0.41 %-ը:

Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դյուրացիայի տարբերության (դյուրացիայի GAP) տարվա միջին ցուցանիշը կազմել է 1.47 տարի՝ տատանվելով 1.24-1.66 տարի միջակայքում: Ընդ որում, ըստ լեվերեջի ճշգրտված միջին տարեկան դյուրացիայի GAP-ը՝ կազմել է 1.74 տարի, որի առավելագույն մակարդակը գրանցվել է հունիս-հուլիս ամիսներին՝ 1.93 տարի:

Արտարժույթային ռիսկ

Միջազգային ֆինանսական շուկաների անկայունության և հատկապես տարվա երկրորդ կեսից դոլարային միջոցների նկատմամբ բարձր պահանջարկի պայմաններում Բանկն իրականացրել է արտարժույթային ռիսկերի կառավարման պահպանողական քաղաքականություն: Մասնավորապես, Բանկը բոլոր մեծ բաց արժույթային ռիսկերը ծածկել է նույն կամ հաջորդ բանկային օրվա ընթացքում, ինչպես նաև ռիսկերի հեջավորման նպատակով ակտիվորեն կիրառել է 15, 30 և 60-օրյա արժույթային ֆորվարդներ: Արդյունքում, տարվա ընթացքում մեկօրյա VaR-ի միջին մեծությունը կազմել է 341 հազ. դրամ, իսկ տատանման ամպլիտուդան կազմել է 5 հազ.-ից 1.8 մլն դրամ: Միևնույն ժամանակ տասնօրյա VaR-ի միջին մեծությունը կազմել է 1 մլն դրամ՝ 17 հազ.-ից մինչև 5.6 մլն դրամի տատանման սահմաններով:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը դիտվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ (հավանականություն), որը կարող է առաջանալ Բանկի անձնակազմի ոչ համարժեք, սխալ (պատահական, միտումնավոր) գործողությունների կամ տեխնիկական խափանումների արդյունքում: 2008թ. ընթացքում Բանկին հաջողվել է վերահսկելի և կառավարելի դարձնել գործառնական ռիսկը, մասնավորապես, Բանկի բոլոր բիզնես գործառնություններում ներդրվել և/կամ հստակեցվել են վերահսկման առնվազն երկաստիճան (շատ դեպքերում եռաստիճան) համակարգեր, կանոնակարգվել է հաշվապահական հաշվառման և գործառնական ծրագրում իրավասությունների բաշխումը և տարանջատումը, ուժեղացվել է հսկողությունը և վերահսկողությունը ներքին իրավական ակտերով սահմանված իրավասությունների պահպանման նկատմամբ, սահմանվել են սխալների բացահայտման և համապատասխան հաշվետվությունների ներկայացման համակարգեր:

ԳԼՈՒԽ 2.

Բանկի Ֆինանսական վիճակի վրա ազդող ռեպրերի և գործոնների նկարագիրը

Սույն գլուխն ընդգրկում է այն կարևոր ռեպրերի և գործոնների նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը և ազդեցություն են ունեցել Բանկի ֆինանսական վիճակի վրա: Կարևոր գործոններ են հաճախորդների բազայի կառուցվածքային փոփոխությունները, արտաքին միջավայրի գործոնները (միջազգային շուկաներ, ՀՀ տնտեսություն, ֆինանսաքանկային հատված, օրենսդրական դաշտ), ներքին միջավայրի գործոնները (կորպորատիվ կառավարում, ներքին վերահսկողության համակարգ, անձնակազմի կառավարում):

Հաճախորդների բազայի կառուցվածքային փոփոխությունները

Բանկի մարտավարական խնդիրներից մեկն է նաև Բանկի հաճախորդների կայուն աճի ապահովումը, նրանց սպասարկման որակի բարձրացումը:

Բանկի հաճախորդների քանակը 2008 թ տարեվերջին կազմել է 5950, որից ֆիզիկական անձանց քանակը 5085, իսկ իրավաբանական անձանց՝ 865: Բանկի հաճախորդների աճը 2007 թ նկատմամբ կազմել է 61 %, իսկ ծրագրվածի նկատմամբ 33 % աճ: Բանկի հաճախորդների աճը հիմնականում պայմանավորված է Բանկի կողմից մարկետինգային քաղաքականության իրականացման արդյունավետությամբ, հաճախորդների տարբեր սեգմենտների ընդլայնմամբ, կորպորատիվ հաճախորդների (աշխատավարձի ծրագրով ընդգրկված քարտային հաճախորդներ) ընդլայնմամբ, ինչպես նաև Բանկի վստահության ամրապնդման և հեղինակության բարձրացման շնորհիվ: Բանկի ավանդատուների քանակը 2008 թ տարեվերջին կազմել է 607 ավանդատու, որից ֆիզիկական անձանց քանակը՝ 593, իսկ իրավաբանական անձանց քանակը՝ 14: Ժամկետային ավանդային հաշիվների քանակը կազմել է 799, որոնց 97 % բաժին է ընկնում ֆիզիկական անձանց: Ժամկետային ավանդների հաշիվների քանակը 2007 թ նկատմամբ աճել է 13 %-ով: Բանկի քարտապանների քանակը կազմել է 2729, որից ֆիզիկական անձանց քանակը՝ 2689, իսկ իրավաբանական անձանց քանակը՝ 40: Բանկի քարտապանների աճը 2007 թ նկատմամբ կազմել է 130 %:

Արտաքին միջավայրի գործոնները:

ա) միջազգային շուկաներում.

Բանկը ձեռնարկել է միջոցառումներ միջազգային ֆինանսական ճգնաժամի մարտահրավերներին դիմագրավելու նպատակով: Բանկն ունեցել է կապիտալիզացիայի և իրացվելիության բարձր մակարդակ ծածկելու դրամական միջոցների հնարավոր անակնկալ արտահոսքը:

բ) Հայաստանի Հանրապետության տնտեսությունում.

2008 թ ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների գծով աճի տեմպերը դրական ազդեցություն են ունեցել Բանկի դրամական հոսքերի աճի վրա: Մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական վարչության տվյալներով տնտեսական աճը 2008 թ հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 6.8 %: ՀՆԱ-ի բացարձակ մեծությունը տարեվերջին կազմել է 3650 մլրդ դրամ: Արդյունաբերական

արտադրանքի ծավալների աճը 2008 թ կազմել է 2 %, շինարարության բնագավառի ծավալների աճը կազմել է 1.7 %, բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալների աճը կազմել է 13.8 %, մանրածախ առևտրի ոլորտում նույնպես գրանցվել է աճ 4.4 %-ով: 2008 թ ընթացքում աճել է միջին ամսական աշխատավարձերի մակարդակը 17.4 %-ով:

2008 թ ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում միջին տոկոսադրույքների մակարդակի աճը 2007 թ նկատմամբ հանգեցրել է Բանկի արժեթղթերի պորտֆելի միջին եկամտաբերության մակարդակի բարձրացմանը 1.18 տոկոսային կետով, հետևաբար նաև տոկոսային եկամուտների ավելացմանը 16.9 մլն դրամ գումարով:

գ) Ֆինանսաբանկային հատվածում.

Չնայած համաշխարհային ֆինանսական ճգնաժամին՝ ՀՀ որոշ բանկերի հաջողվեց ապահովել օտարերկրյա էժան ռեսուրսների բավականաչափ ներհոսք: 2008 թ ընթացքում առևտրային բանկերը միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավեցին ընդհանուր առմամբ 71 մլրդ դրամի չափով միջոցներ: Կապիտալի շուկայում որոշ բանկեր հայտարարեցին սեփական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ (ընդհանուր առմամբ 4.4 մլրդ դրամ): Բանկային համակարգում նման միտումների զարգացումը ստեղծել է լուրջ մրցակցային պայքար, «ստիպել է» բանկերին իրացվելի միջոցների ապահովման նպատակով բարձրացնել ավանդների ներգրավման ծախսատարությունը, կրճատել տոկոսային մարժան:

դ) օրենսդրական դաշտում.

ՀՀ ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանության ոլորտում իրականացվել են բարեփոխումներ, ընդունվել են երեք հիմնարար օրենքներ. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», «Սպառողական կրեդիտավորման» և «Ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքները: Բանկի կողմից մշակվել և իրագործվել են միջոցառումներ սույն օրենքներից բխող պահանջները բավարարելու նպատակով, մասնավորապես կանոնակարգվել է սպառողների պահանջների, նրանց կողմից ներկայացված դիմում-բողոքների ընդունման և քննարկման գործընթացը, տեղեկատվական ամփոփագրերի տրամադրման, տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման և տրամադրման գործառույթները:

ՀՀ կենտրոնական բանկի որոշմամբ Western Union վճարային համակարգի Հայաստանի Հանրապետությունում գործունեության դադարեցման հետևանքով որոշակիորեն կրճատվել են Բանկի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները:

Ներքին միջավայրի գործունեություն

Կորպորատիվ կառավարում

2008 թ Բանկն առանձնակիորեն կարևորել է կորպորատիվ կառավարման սկզբունքների արմատավորումը գործունեության բոլոր ոլորտներում, նպատակ ունենալով հիմնականում՝

- ապահովել ռազմավարական մենեջմենթի գլխավոր խնդրի՝ Բանկի գործունեության շահութաբերության մակարդակի անընդհատ աճ, հավելյալ արժեքի ստեղծում Բանկի բաժնետերերի համար,
- ամբողջությամբ ներառել Բանկի գործառույթներում համակարգը կարգավորող օրենսդրական բարեփոխված ակտերը,

➤ ընդլայնել և խորացնել բանկային վերահսկողության բազելյան հիմնադրույթների կիրառման սահմանները կորպորատիվ կառավարման և, հատկապես, բանկային բոլոր տիպի ռիսկերի գնահատման, գործունեության կանխատեսելիության, հրապարակայնության և թափանցիկության ապահովման գործընթացներում,

➤ հստակորեն գնահատել յուրաքանչյուր աշխատողի ներդրման կշիռը Բանկի գործունեության ամբողջական արդյունքներում:

Ներքին հսկողության համակարգը

Համաձայն ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի պահանջների՝ Բանկում արդյունավետ գործում է ներքին հսկիչի և վերահսկողության (Ներքին աուդիտի) համակարգը, որը նպատակաուղղված է բարձրացնելու Բանկի ընթացիկ գործունեության նկատմամբ կիրառվող հսկողությունը, ի նպաստ ծրագրավորված խնդիրների արդյունավետ կատարման: Բանկում արդյունավետ գործունեություն է իրականացնում ներքին դիտարկումների բաժինը՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ուղղությամբ:

Անձնակազմի Կառավարում

2008 թ ընթացքում Բանկի աշխատակիցների միջին ամսական թվաքանակը կազմել է 106, որից 78-ը՝ վարչական աշխատակիցներ և 16-ը մասնաճյուղերի աշխատակիցներ: Բանկի ֆունկցիոնալ աշխատակիցների 100 %-ն ունի բարձրագույն կրթություն: 2008 թ ընթացքում բարձրագույն կրթությամբ աշխատակիցների միջին ամսական թվաքանակը կազմել է 94-ը, որոնցից 13-ն ունեն գիտական աստիճաններ, նրանց մի մասը ներկայումս էլ իրականացնում է գիտամանկավարժական գործունեություն:

Բանկը պարբերաբար միջոցներ է ձեռնարկում լավագույն և փորձառու մասնագետների արտահոսքը կանխելու նպատակով: Դեկավարության ուշադրությունից չեն վրիպում բանկային գործի գիտակ և ջանադրաբար աշխատող անձինք: Բանկում դեռ 2008 թ տարեսկզբին միջին հաշվարկով ավելի քան 35 %-ով բարձրացավ ամսական աշխատավարձի չափը: 2008 թ ընթացքում աշխատակիցներին վճարվել է ընդհանուր առմամբ 27.4 մլն ՀՀ դրամ պարգևավճար՝ իրենց գործունեության բարձր արդյունավետության խրախուսման համար:

2009թ. կարևոր դեպքերի և գործոնների ազդեցությունը:

Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը ՀՀ ֆինանսատնտեսական համակարգի վրա էականորեն դրսևորվեց 2009թ. հունվարից: Սա հիմնականում պայմանավորված էր արտաքին պահանջարկի կրճատմամբ, դրամական փոխանցումների և ֆինանսական կապիտալի ներհոսքի կրճատմամբ: Ծգնաժամի խորացումը ստեղծեց որոշակի բացասական դրսևորումներ նաև Բանկի բնականոն գործունեության մեջ, մասնավորապես, ՀՀ դրամի դուլարի նկատմամբ կտրուկ արժեզրկման սպասումները Բանկի հաճախորդների մեծ մասի մոտ առաջացրել էր խուճապ, և դրանով էր պայմանավորված բանկային հաշիվներում դրամային մասը արտարժույթով փոխակերպելու, ավանդային հաշիվները արտարժույթով կարճ ժամկետներով վերաձևակերպելու դրսևորումները: Այս գործոններով էր պայմանավորված նաև Բանկի պարտավորությունների կառուցվածքում դրամային մասի տեսակարար կշռի նվազումը, ինչպես նաև պարտավորությունների ժամկետայնության նվազումը և ակտիվների ու պարտավորությունների դյուրացիայի ճեղքվածքի աճը: Բանկը

կիրառել է համարժեք քայլեր նվազագույնի հասցնելու այս գործոններով պայմանավորված ռիսկերը: Մասնավորապես, բարձրացվել են ներգրավվող ավանդների տոկոսադրույքները՝ ավանդների ժամկետայնության աճը խթանելու նպատակով:

Ակտիվների կառավարման գործընթացում Բանկի համար կարևորագույն խնդիր է հանդիսանում վարկային պորտֆելի որակի բարելավումը՝ դասակարգված վարկերի և հաշվեկշռից դուրս գրված վարկերի հնարավոր կորուստների պահուստներից զուտ հոսքերի ավելացման միջոցով:

Բանկը միջոցառումներ է ձեռնարկել մեղմելու այն վարկառուների վարկային պայմանները, որոնց դրամական հոսքերը կրճատվել են ճգնաժամի հետևանքով և որոնք պատշաճ կերպով սպասարկել են իրենց վարկային պարտավորությունները:

ԳԼՈՒԽ 3 Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Մույն գլուխն ընդգրկում է Բանկի հետագա հնարավոր զարգացման հիմնական ուղղություններն ու շեշտադրումները

Բանկը կարևորում է զարգացման ռազմավարության շարունակականությունը, որպես ունիվերսալ կառույցի, որը կպահպանվի նաև պլանավորվող ժամանակահատվածում, ինչը թույլ է տալիս առավել ցայտուն բացահայտել Բանկի առավելություններն այլ բանկերի նկատմամբ (մատուցելով ծառայությունների ամբողջական փաթեթ), լիարժեք բավարարել հաճախորդների պահանջարկը բանկային ծառայությունների նկատմամբ: Բանկը պահպանելու է ակտիվա-պասիվային համամասնությունները, ռազմավարության շեշտադրումներն ուղղվելու են գործունեության բոլոր բնագավառների որակական կողմի հետագա բարելավմանը: Բանկի առաջնահերթ խնդիրներից է ռազմավարական ծրագրով նախանշված զարգացման տեմպերի ապահովումը, ինչպես նաև մի շարք այլ կարևորագույն խնդիրների իրագործումը, որոնք ներկայացված են ստորև՝

- Շահութաբերության սահմանված մակարդակի ապահովումը
- Ընդհանուր ակտիվների աճի ապահովումը
- Եկամտաբեր ակտիվների մասնաբաժնի ավելացումը
- Կապիտալի աճի ապահովումը բացառապես շահույթի հաշվին
- Ընդհանուր պարտավորությունների աճի ապահովումը (հիմնականում երկարաժամկետ ավանդների ներգրավման միջոցով), կառուցվածքային համամասնությունների պահպանումը
- Բանկի կառավարման համակարգի կատարելագործումը
- Ռիսկերի կառավարման և վերահսկման արդյունավետության բարձրացումը
- Հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը
- Քարտային բիզնեսի, որպես զարգացման առավել մեծ ներուժ ունեցող սեգմենտի ընդլայնումը
- Բանկային նոր, արդիական տեխնոլոգիական համակարգերի ներդրումը
- Մարկետինգի ժամանակակից քաղաքականության շարունակական իրականացումը, մասնավորապես նպատակաուղղված Բանկի ծառայությունների առաջխաղացմանը, կորպորատիվ կուլտուրայի կանոնների ձևավորմանն ու ներդրմանը:

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
Բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների համար

Ցուցանիշի անվանումը	Ժամա- նակա- շրջան 2008	Ժամա- նակա- շրջան 2007
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	747,234	909,620
Սեփական կապիտալի միջին մեծություն	5,015,148	4,177,754
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	14.9%	21.8%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	747,234	909,620
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	13,946,134	10,245,894
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	5.4%	8.9%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	747,234	909,620
Գործառնական եկամուտ	1,989,621	1,548,694
Զուտ շահույթի մարժա (NPM), %	37.6%	58.7%

Գործառնական եկամուտ	1,989,621	1,548,694
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	13,946,134	10,245,894
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	14.3%	15.1%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	13,946,134	10,245,894
Մեփական կապիտալի միջին մեծություն	5,015,148	4,177,754
Մեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	2.8	2.5
Զուտ տոկոսային եկամուտ	1,120,681	864,531
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	11,021,911	7,782,033
Զուտ տոկոսային մարժա (NIM)	10.2%	11.1%
Տոկոսային եկամուտ	1,635,135	1,133,966
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	11,021,911	7,782,033
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	14.8%	14.6%
Տոկոսային ծախսեր	514,454	269,435
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	8,248,879	5,749,016
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	6.2%	4.7%

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	747,234	909,620
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	775,556	734,621
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.96	1.23
Սպրեդ	8.6%	9.9%

Աղյուսակներում ժամանակաշրջանները լրացնելիս պետք է ընտրել հնարավորինս վերջին ժամանակաշրջանները: Որպես ժամանակաշրջաններ կարող են ընտրվել ինչպես տարին, այնպես էլ եռամսյակները: Եթե որևէ ժամանակաշրջանի համար լրացվող տվյալները աուդիտի կողմից հաստատված չեն, ապա այդ մասին պետք է նշում կատարվի: Համապատասխան պլանակների ժամանակաշրջանները պետք է ընտրվեն ըստ նվազման:

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն
 Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

«Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

**2008թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Հաշվապահական հաշվեկշիռ	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ջարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդին

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ջարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2008թ., հաշվետու տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն դրանց ճշմարիտ կերպով ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և վարումը, որը թույլ կտա պատրաստել և ճշմարիտ կերպով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից՝ պայմանավորված խարդախությամբ կամ սխալով: Ղեկավարությունը պատասխանատու է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության և կիրառման, ինչպես նաև՝ ստեղծված հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատականներ տալու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի համապատասխան պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի որոշումից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե՛ խարդախությամբ և թե՛ սխալներով: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել ստեղծված հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև՝ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2008թ., ինչպես նաև հաշվետու տարվա նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Էնդրյու Քոքսշել
Տնօրեն

Իրինա Գևորգյան
Սենեջեր, Աուդիտի բաժին

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
22 ապրիլի 2009թ.

*«Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

	Ծնթգ.	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	1,609,824	1,099,708
Տոկոսային ծախս	4	(460,128)	(229,385)
Չուտ տոկոսային եկամուտ		1,149,696	870,323
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	5	133,520	117,955
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	6	(39,276)	(18,251)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		94,244	99,704
Չուտ շահույթ/(վնաս) իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(2,749)	10,992
Չուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից	7	172,242	115,546
Չուտ իրացված (վնաս)/շահույթ վաճառքի համար մատչելի ակտիվների գծով		(810)	18,840
Այլ եկամուտներ	8	385,439	386,867
Այլ ծախսեր	9	(21,545)	(27,913)
		1,776,517	1,474,359
Արժեզրկումից կորուստներ	10	(179,985)	(58,443)
Ընդհանուր վարչական ծախսեր	11	(667,348)	(501,155)
Շահույթ մինչև հարկումը		929,184	914,761
Շահութահարկի գծով ծախս	12	(187,602)	(195,851)
Չուտ շահույթ		741,582	718,910

5-ից 58-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Բանկի ղեկավարության կողմից 2009թ. ապրիլի 22-ին:

Պրն. Կարեն Սարգսյան
Գործադիր տնօրեն

Պրն. Պետրոս Կոլիկյան
Գլխավոր հաշվապահ

	Ծնթգ.	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ		292,482	312,845
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	13	1,364,412	915,688
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	14	770,271	592,270
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում			
- Բանկի կողմից պահվող	15	378,613	1,066,035
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	15	390,376	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	16	571,691	1,106,305
Հաճախորդներին տրված վարկեր	17	10,260,908	6,210,824
Վաճառքի համար մատչելի ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	18	72,840	916,821
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	18	540,109	199,586
Հիմնական միջոցներ	19	1,405,760	1,433,596
Այլ ակտիվներ	20	34,510	116,525
Ընդամենը ակտիվներ		16,081,972	12,870,495
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	21	633,559	661,591
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	22	997,857	895,872
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	23	8,575,402	6,540,281
Այլ պարտավորություններ	24	78,484	53,772
Հետաձգված հարկային պարտավորություն	25	51,310	55,012
Ընդամենը պարտավորություններ		10,336,612	8,206,528
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	26	4,525,992	4,206,640
Էմիսիոն եկամուտ	26	30,670	-
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		360,103	371,371
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ		389	(451)
Չբաշխված շահույթ		828,206	86,407
Ընդամենը սեփական կապիտալ		5,745,360	4,663,967
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		16,081,972	12,870,495
Պարտավորվածություններ և պայմանական դեպքեր	29-31		

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԻՑ		
Ստացված տոկոսներ, կոմիսիոն և այլ վճարներ	1,630,305	1,196,463
Վճարված տոկոսներ, կոմիսիոն և այլ վճարներ	(481,665)	(217,811)
Չուտ (ելքեր)/մուտքեր իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	(2,749)	16,872
Չուտ հոսքեր արտարժույթով գործառնություններից	101,267	175,843
Չուտ հոսքեր վաճառքի համար մատչելի ակտիվներից	239	18,840
Այլ եկամուտ	363,889	357,937
Ընդհանուր վարչական ծախսեր	(578,275)	(515,662)
	1,033,011	1,032,482
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	(113,739)	(17,238)
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	(84,133)	(264,361)
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	343,186	(91,451)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	598,062	(921,598)
Հաճախորդներին տրված վարկեր	(4,150,795)	(2,012,846)
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	491,562	(202,707)
Այլ ակտիվներ	35,973	92,822
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	(81,926)	313,155
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	102,245	895,217
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	2,071,010	1,705,839
Այլ պարտավորություններ	14,742	747
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից մինչև հարկերի վճարումը	259,198	530,061
Վճարված շահութահարկ	(180,787)	(40,354)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	78,411	489,707
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԻՑ		
Հիմնական միջոցների զուտ ձեռք բերում	(61,822)	(148,214)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	(61,822)	(148,214)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԻՑ		
Հոսքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	350,022	-
Վճարված շահաբաժիններ	(11,051)	-
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	338,971	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	355,560	341,493
Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(41,869)	(72,818)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկազմի դրությամբ	1,300,935	1,032,260
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկազմի դրությամբ	33 1,614,626	1,300,935

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող Ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*«Չարզացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

	Բաժնետիր. կապիտալ հազ. դրամ	Էմիսիոն եկամուտ հազ. դրամ	Հիմնական միջոցների վերագնահատմ. պահուստ հազ. դրամ	Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատմ. պահուստ հազ. դրամ	Չբաշխված շահույթ/ (կուտակված վնաս) հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2007թ.	4,206,640	-	354,760	(656)	(641,836)	3,918,908
Տարվա զուտ շահույթ	-	-	-	-	718,910	718,910
Ջուտ չիրացված վնաս վաճառքի համար մատչելի ակտիվների գծով՝ առանց 51 հազար դրամ գումարով հետաձգված հարկի	-	-	-	205	-	205
Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց 6,487 հազար դրամ գումարով հետաձգված հարկի	-	-	25,944	-	-	25,944
Վերագնահատման հետևաբնով առաջացած աճի մաշվածություն	-	-	(9,333)	-	9,333	-
Ընդամենը ճանաչված եկամուտ և ծախս						745,059
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007թ.	4,206,640	-	371,371	(451)	86,407	4,663,967
Տարվա զուտ շահույթ	-	-	-	-	741,582	741,582
Ջուտ չիրացված վնաս վաճառքի համար մատչելի ակտիվների գծով՝ առանց 210 հազար դրամ գումարով հետաձգված հարկի	-	-	-	840	-	840
Վերագնահատման հետևաբնով առաջացած աճի մաշվածություն	-	-	(11,268)	-	11,268	-
Ընդամենը ճանաչված եկամուտ և ծախս						742,422
Թողարկված բաժնետոմսեր	319,352	30,670	-	-	-	350,022
Վճարված շահաբաժիններ	-	-	-	-	(11,051)	(11,051)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.	4,525,992	30,670	360,103	389	828,206	5,745,360

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների քաղկացուցիչ մասը կազմող Ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Նախապատմություն

Հիմնական գործունեություն

«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), նախկինում «Վերակառուցման և Զարգացման Բանկ»-ը, Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես բաց բաժնետիրական ընկերություն 1990թ-ին: Բանկն ունի բանկային գործունեություն իրագործելու լիցենզիա: 1995թ. նոյեմբերին Բանկը վերանվանվեց «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ-ի: Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների ապահովագրման պետական համակարգի անդամ: Բանկի հիմնական գործունեությունն ավանդների ներգրավումն ու հաճախորդների հաշիվների սպասարկումն է, վարկերի և երաշխիքների տրամադրումն է, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործառնությունների իրականացումն է: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (ՀՀ ԿԲ): Բանկն ունի Երևանում, Հայաստանի Հանրապետությունում տեղեկայված մեկ մասնաճյուղ: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Պարոնյանի փ. 21/1: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում: Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմում էր 107 (2007թ-ին՝ 117):

Բաժնետերեր

Բանկի բաժնետերերի կազմը հետևյալն է՝ պրն. Ռուբեն Հայրապետյան (20.0%), պրն. Արայիկ Մելիսյան (16.9%), պրն. Գրիգոր Թերմենջյան (16.0%), պրն. Օնիկ Ալեքսանյան (10.2%), Իսթինվեստոր ՍՊԸ (9.4%) և այլ բաժնետերեր (27.5%):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 32-ում:

Հայաստանի գործարար միջավայր

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում վերջերս դիտվող ճգնաժամը ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի ֆինանսական դրության և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի ակտիվների և իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես նաև վերագնահատված արժեքով ներկայացված շենքերի:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դեկլարության կողմից Բանկի համար ֆունկցիոնալ արժույթ է սահմանվել դրամը, քանի որ վերջինս արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը: Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների ու ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.

- Վարկերի արժեզրկման գնահատում - Ծանոթագրություն 17

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով ներկայացված, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Տարեվերջի դրությամբ սահմանված պաշտոնական փոխարժեքը կազմել է՝ 306.73 դրամ = 1 ԱՄՆ դոլար (2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 304.22 դրամ = 1 ԱՄՆ դոլար):

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները, առևտրային բանկերում և ՀՀ ԿԲ-ում պահվող նոստրո հաշիվները:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ
- սկզբնական ճանաչման պահին Բանկի կողմից նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Բանկը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Բանկը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Բանկը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կանոնավոր ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռք բերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում սպաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե առկա շուկայական տվյալների հիման վրա կատարած գնահատումը վկայում է սկզբնական ճանաչման պահին արժեքի համեմատ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի աճի կամ նվազման մասին, ապա այդ աճից/նվազումից ստացված շահույթը կամ վնասը ճանաչվում են անմիջապես ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե սկզբնական շահույթի կամ վնասի գումարը գնահատվում է՝ հիմք ընդունելով ոչ միայն առկա շուկայական տվյալները, ապա այս շահույթը կամ վնասը համարվում են հետաձգված և համապատասխան հիմունքով ճանաչվում են ակտիվի կամ պարտավորության օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կամ ճանաչվում են շուկայական տվյալների առկա դառնալու, կամ ակտիվի կամ պարտավորության օտարման պահին:

Իրական արժեքի չափման սկզբունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Չեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում, մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չորջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով չափվող, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերությունների), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները հաշվարկվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և որպես վաստակած եկամուտ ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը և վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկման միջոցով:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվներից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է կամ երբ Բանկը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Բանկը որոշ ակտիվներ ապաճանաչում է նաև այն դեպքում, երբ դուրս է գրում անհավաքագրելի ճանաչված ակտիվներին վերաբերող մնացորդները:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որոնց դեպքում արժեթղթերն պահվում են հաշվապահական հաշվեկշռում, իսկ պայմանագրային կողմի նկատմամբ պարտավորությունն արտացոլվում է համապատասխանաբար այլ բանկերի կամ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ռեպո պայմանագրի գործողության ընթացքում:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են համապատասխանաբար որպես բանկերից կամ հաճախորդներից ստացվելիք գումարներ: Գնման և վաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսագումար և հաշվեգրվում է հակադարձ ռեպո պայմանագրի գործողության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք արտացոլված են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Բանկին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Վերագնահատում

Բանկի շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր կերպով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների շարժից: Երբ հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ հողի և շենքերի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Վերագնահատման գծով պահուստը վերադասակարգվում է չբաշխված շահույթի, որը հաշվարկվում է որպես ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերություն:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման ամսաթվից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջինիս շինարարությունն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	20-50 տարի
Տնտեսական միջոցներ	5 տարի
Համակարգիչներ և կապի սարքավորումներ	5 -20 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի
Այլ	5 -20 տարի
Վարձակալված հիմնական միջոցների գծով կապիտալ ներդրումներ	10 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստը:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռք բերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	10 տարի

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և վաճառքի համար մատչելի չգնանշված պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված սպազա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայում, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ առկա տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Նախևառաջ Բանկը գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի այն զգալի թե ոչ, ապա այն այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագրի ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման ուսումնասիրություն և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, ներառված չեն արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Բանկի տրամադրության տակ կան քիչ տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում Բանկը գնահատում է արժեզրկումից կորստի գումարը՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ Բանկի ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվների կազմում ընդգրկված սեփական կապիտալի չգնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքին՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են, զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտականությանը բնորոշ ռիսկերը:

Վերակառուցման գծով պահուստը ճանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերակառուցման մանրամասն ու պաշտոնական ծրագիրը, և վերակառուցումն արդեն սկսվել է կամ դրա մասին հրապարակայնորեն հայտարարվել է: Հետագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները:

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունն ի սկզբանե ճանաչվում է իրական արժեքով՝ հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Բաժնետիրական կապիտալ

Արտոնյալ բաժնետոմսեր

Արտոնյալ բաժնետիրական կապիտալը, որը մարման ենթակա չէ, դասակարգվում է որպես սեփական կապիտալ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոններով ու կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Հարկում

Շահույթի կամ վնասի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների ու հարկային նպատակով օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Ժամանակավոր տարբերությունները չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որը չի ազդում հաշվապահական հաշվառման կամ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկի գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի իրացման կամ մարման ակնկալվող մեթոդի վրա՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

Տոկոսային եկամտի և ծախսի ճանաչում

Բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներին և իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներին (որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում) վերաբերող տոկոսային եկամուտն իրենից ներկայացնում է միայն կտրոնների գծով տոկոսը:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով (որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում) հաշվեգրված զեղչերը և հավելավճարները ճանաչվում են իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից (որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում) ստացված շահույթի կազմում՝ հանած վնասները:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք հարակից ուղղակի ծախսերի հետ դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կոմիսիոն և այլ վճարները, այլ եկամուտը և ծախսը ճանաչվում են համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Բանկի գործունեության վրա: Բանկը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ: Բանկը դեռևս չի վերլուծել այս նոր ստանդարտների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (վերանայված), որը գործում է 2009թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սահմանում է, թե ինչպես կազմակերպությունը պետք է իր ֆինանսական հաշվետվություններում ներկայացնի սեփական կապիտալի այն փոփոխությունները, որոնք չեն առաջացել սեփականատերերի հետ գործարքների արդյունքում, և սեփական կապիտալի այլ փոփոխությունները, ինչպես նաև սահմանում է ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացմանը վերաբերող մի շարք այլ պահանջներ:
- ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում – Կիրառելի հեջավորված միավորներ» ստանդարտի փոփոխությունը, որը գործում է 2009թ. հուլիսի 1-ից կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, ներկայացնում է կիրառման լրացուցիչ ուղեցույց, որը պարզաբանում է, որ սահմանված գնից կամ փոփոխականից բարձր կամ ցածր դրամական միջոցների հոսքերը կամ հեջավորված միավորի իրական արժեքը կարող են նախատեսվել:
- ՀՀՄՍ 18 «Հասույթ» ստանդարտի փոփոխությունը, որը գործում է 2009թ. հունվարի 1-ից կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, ուղեցույց է տրամադրում ֆինանսական ակտիվի առաջացման գործարքի հետ կապված ծախսումների առումով, ինչը համապատասխանում է ՀՀՄՍ 39-ում ներառված գործարքի հետ կապված ծախսումների սահմանմանը:

4 Չուտ տոկոսային եկամուտ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	1,436,948	963,556
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	102,031	61,139
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	33,114	15,668
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	20,968	5,059
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	15,294	54,286
Այլ	1,469	-
	1,609,824	1,099,708
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(427,407)	(220,753)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(22,673)	(5,791)
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	(6,698)	(2,128)
Այլ	(3,350)	(713)
	(460,128)	(229,385)
Չուտ տոկոսային եկամուտ	1,149,696	870,323

5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Պլաստիկ քարտերի սպասարկման վճարներ	39,043	23,422
Կանխիկացման վճարներ	32,905	31,149
Վճարահաշվարկային գործառնությունների վճարներ	29,399	26,159
Վարկերի գծով վճարներ	18,370	25,466
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	4,114	3,059
Այլ	9,689	8,700
	133,520	117,955

6 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Պլաստիկ քարտեր	20,257	1,291
Վճարահաշվարկային գործառնություններ	9,685	9,055
Կանխիկացման վճարներ	4,214	4,566
Դրամական միջոցների փոխադրման ծախսեր	3,030	1,980
Այլ	2,090	1,359
	39,276	18,251

7 Չուտ շահույթ փոխարժեքային տարբերություններից

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Շահույթ սփոթ գործարքներից և ածանցյալ ֆինանսական գործիքներից	156,946	113,652
Չուտ շահույթ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	15,296	1,894
	172,242	115,546

8 Այլ եկամուտ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Դուրս գրված վարկերի վերականգնում	316,947	235,343
Ստացված տույժեր և տուգանքներ	61,423	110,108
Այլ եկամուտ	7,069	41,416
	385,439	386,867

9 Այլ ծախսեր

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Վնաս գրավի տնօրինման արդյունքում առաջացած հիմնական միջոցների օտարումից	12,535	-
Վճարումներ Ավանդների երաշխավորման հիմնադրամին	8,170	5,792
Տույժեր և տուգանքներ	501	14,751
Այլ ծախսեր	339	7,370
	21,545	27,913

10 Արժեզկումից կորուստներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	179,985	58,443

11 Ընդհանուր վարչական ծախսեր

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Աշխատակիցների հատուցումներ	363,834	257,223
Մաշվածություն և ամորտիզացիա	89,073	68,880
Աշխատավարձին վերաբերող հարկեր	34,914	27,654
Կապի և հաղորդակցության ծառայություններ	30,165	26,079
Վերանորոգման և պահպանման ծախսեր	24,544	20,785
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	25,396	15,878
Վարձակալություն	24,693	15,250
Մասնագիտական ծառայություններ	24,404	14,064
Անվտանգության ծառայություն	14,671	8,371
Գովազդ և շուկայավարում	7,751	5,440
Գրասենյակային ծախսեր	5,504	4,624
Գործուղման ծախսեր	1,466	1,015
Այլ	20,933	35,892
	667,348	501,155

12 Ծահութահարկի գծով ծախս

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	191,514	61,960
Հետաձգված հարկի գծով (օգուտ)/ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(3,912)	133,891
Ծահութահարկի գծով ընդհանուր ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	187,602	195,851

Ընթացիկ և հետաձգված հարկերի համար Բանկի նկատմամբ կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2007թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2008թ. հազ. դրամ	%	2007թ. հազ. դրամ	%
Ծահույթ մինչև հարկումը	929,184		914,761	
Ծահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	185,837	20%	182,952	20%
Չնվազեցվող ծախսեր	1,765	0.2%	12,899	1.4%
	187,602	20.2%	195,851	21.4%

13 ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Նոստրո հաշիվներ	1,157,508	822,523
Ելքագրման ոչ ենթակա գումար	206,904	93,165
	1,364,412	915,688

ՀՀ կենտրոնական բանկում պահվող նոստրո հաշիվը ներառում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն հաշվարկվող պահուստը: Այս պահուստից միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստի՝ 14 օրվա կտրվածքով միջին նվազագույն մեծությունը չպահպանելու դեպքում Բանկի նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ:

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 206,904 հազար դրամ գումարը (2007թ-ին՝ 93,165 հազար դրամ) ենթակա չէր ելքագրման ԱրՔա քարտերի ծառայությունների գծով և հաշվարկվել էր այդ ծառայությունների գծով հաճախորդների չօգտագործված վարկային սահմանաչափերի հիման վրա:

14 Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Նոստրո հաշիվներ		
ՏՀԶԿ կազմի մեջ մտնող երկրների բանկեր	151,747	291,039
10 խոշորագույն հայկական բանկեր	2,570	4,677
Այլ օտարերկյա բանկեր	10,319	21,961
Ընդամենը նոստրո հաշիվներ	164,636	317,677
Վարկեր և ավանդներ		
ՏՀԶԿ կազմի մեջ մտնող երկրների բանկեր	92,806	106,510
Փոքր և միջին չափի հայկական ֆինանսական հաստատություններ	251,435	694
Ընդամենը վարկեր և ավանդներ	344,241	107,204
Բանկերում տեղաբաշխված այլ միջոցներ		
Արտարժույթի հետզման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ փոքր և միջին չափի հայկական բանկերից	214,711	134,088
Այլ*	46,683	33,301
Ընդամենը բանկերում տեղաբաշխված այլ միջոցներ	261,394	167,389
	770,271	592,270

* 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 41,253 հազար դրամ գումարը (2007թ-ին՝ 22,083 հազար դրամ) ենթակա չէր ելքագրման Մաստեր քարտով իրականացվող վճարահաշվարկային գործառնությունների գծով:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ տեղաբաշխված միջոցներ չորս բանկում ու ֆինանսական հաստատությունում (2007թ-ին՝ երկու), որոնց մնացորդները գերազանցում էին բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 651,850 հազար դրամ և 476,292 հազար դրամ:

15 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
<i>Բանկի կողմից պահվող</i>		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Կառավարության պարտատոմսեր		
ՀՀ կառավարության արժեթղթեր	175,334	904,738
Ընդամենը կառավարության պարտատոմսեր	175,334	904,738
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Արմենիան Քափրը Փրոգրամ	63,624	102,536
Իմեքս Գ-րուպ	51,245	-
Վալեստա	26,089	52,120
Ընդամենը կորպորատիվ պարտատոմսեր	140,958	154,656
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
- Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր		
ՏՀԶԿ կազմի մեջ մտնող երկրների բանկեր	57,955	-
Փոքր և միջին չափի հայկական ֆինանսական հաստատություններ	4,366	6,641
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	62,321	6,641
	378,613	1,066,035
<i>Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված</i>		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր	390,376	-

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կազմում, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառված են 768,989 հազար դրամ գումարով (2007թ-ին 1,066,035 հազար դրամ) ֆինանսական ակտիվներ, որոնք դասակարգված են որպես առևտրական նպատակով պահվող գործիքներ:

Արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում, հիմնական արտարժույթների կտրվածքով, ներկայացված են Բանկի արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրերի գումարները 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ պայմանագրային փոխարժեքը և մինչև մարումը մնացած ժամկետը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս դեռևս չկատարված պայմանագրերի գծով չիրացված շահույթը և վնասը, կատարման ենթակա սակայն դեռևս չկատարված պայմանագրերի գծով ստացվելիք և վճարվելիք գումարների հետ մեկտեղ, համապատասխանաբար ճանաչվել են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կազմում, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

	Անվանական գումար 2008թ. հազ. դրամ	Միջին կշռված պայմանագրային փոխարժեքները
ՀՀ դրամի առք ԱՄՆ դոլարի վաճառք		
Մինչև երեք ամիս	352,740	320.22
Եվրոյի առք ԱՄՆ դոլարի վաճառք		
Մինչև երեք ամիս	1,561,650	0.73

16 Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Փոքր և միջին չափի հայկական ֆինանսական հաստատություններ	571,691	1,106,305

Գրավ

2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին հետևյալ արժեթղթերը.

	Իրական արժեք 2008թ. հազ. դրամ	Իրական արժեք 2007թ. հազ. դրամ
Պետական արժեթղթեր		
ՀՀ կենտրոնական բանկ և ՀՀ կառավարություն	475,869	965,769
Կորպորատիվ պարտատոմսեր	41,707	97,047
	517,576	1,062,816

Հակադարձ հետզնման պայմանագրերի շրջանակներում ձեռք բերված 57,910 հազար դրամ իրական արժեքով արժեթղթերը վաճառվել են հետզնման պայմանագրերի շրջանակներում 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2007թ-ին՝ 698,758 հազար դրամ):

17 Հաճախորդներին տրված վարկեր

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Առևտրային վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	767,464	-
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	5,201,171	3,118,757
Ընդամենը առևտրային վարկեր	5,968,635	3,118,757
Անհատներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	1,705,453	752,836
Հիփոթեքային վարկեր	1,546,423	1,055,748
Ավտոմեքենայի վարկեր	1,224,627	1,378,301
Վարկային քարտեր	36,936	28,225
Ընդամենը անհատներին տրված վարկեր	4,513,439	3,215,110
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	10,482,074	6,333,867
Արժեզրկման գծով պահուստ	(221,166)	(123,043)
Հաճախորդներին տրված գուտ վարկեր	10,260,908	6,210,824

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը 2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	(123,043)	(84,751)
Տարվա գուտ ծախս	(179,985)	(58,443)
Զուտ դուրս գրումներ	81,862	20,151
Մնացորդը տարեվերջին	(221,166)	(123,043)

Առևտրային վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն առևտրային վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Չուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր խոշոր ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման հայտանիշ չի հայտնաբերվել				
- Ստանդարտ վարկեր	767,464	(7,675)	759,789	1.0%
Ընդամենը վարկեր, որոնց գծով արժեզրկման հայտանիշ չի հայտնաբերվել	767,464	(7,675)	759,789	1.0%
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման հայտանիշ չի հայտնաբերվել				
- Ստանդարտ վարկեր	4,621,609	(46,216)	4,575,393	1.0%
Ընդամենը վարկեր, որոնց գծով արժեզրկման հայտանիշ չի հայտնաբերվել	4,621,609	(46,216)	4,575,393	1.0%
Արժեզրկված վարկեր				
- մինչև 30 օր ժամկետանց	217,213	(21,721)	195,492	10.0%
- 30-89 օր ժամկետանց	337,668	(50,651)	287,017	15.0%
- 90-179 օր ժամկետանց	24,681	(3,702)	20,979	15.0%
Ընդամենը արժեզրկված վարկեր	579,562	(76,074)	503,488	13.1%
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	5,201,171	(122,290)	5,078,881	2.4%
Ընդամենը առևտրային վարկեր	5,968,635	(129,965)	5,838,670	2.2%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն առևտրային վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Չուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Վարկեր, որոնց գծով արժեզրկման հայտանիշ չի հայտնաբերվել				
- Ստանդարտ վարկեր	3,016,426	(30,164)	2,986,262	1%
Ընդամենը վարկեր, որոնց գծով արժեզրկման հայտանիշ չի հայտնաբերվել	3,016,426	(30,164)	2,986,262	1%
Արժեզրկված վարկեր				
- մինչև 90 օր ժամկետանց	58,221	(2,911)	55,310	5%
- 90 օրից ավել և մինչև 1 տարի ժամկետանց	44,110	(7,094)	37,016	16%
Ընդամենը արժեզրկված վարկեր	102,331	(10,005)	92,326	10%
Ընդամենը առևտրային վարկեր	3,118,757	(40,169)	3,078,588	1.3%

Առևտրային վարկերի գծով պահուստը գնահատելիս Բանկը հիմնվել է արժեզրկված վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության վրա: Արժեզրկման գծով պահուստի գումարը չափվում է որպես տարբերություն վարկի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև, ներառյալ երաշխիքների գծով փոխհատուցվելի գումարները և գրավը՝ գեղչված վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Առևտրային վարկերը, որոնց համար բացակայում էր արժեզրկման անկողմանակալ վկայություն 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկը ներառել է վարկային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի խմբում և դրանք գնահատել է միասին՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Բանկը ձևավորել է 1% (2007թ-ին՝ 1%) պահուստ այս վարկերի գծով՝ հիմք ընդունելով Բանկի ակնկալվող վնասի դրույքը և Հայաստանում գործող նմանատիպ բանկերի տվյալները:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքը փոփոխվեր մեկ տոկոսով, առևտրային վարկերի արժեզրկման գծով պահուստի գումարը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր/կաճեր 58,387 հազար դրամով:

Գրավի վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է առևտրային վարկերի պորտֆելի վերլուծությունը (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2008թ.	Վարկային պորտֆելի %	2007թ.	Վարկային պորտֆելի %
Անշարժ գույք	4,577,454	76.69%	2,900,348	94.20%
Դրամական ավանդ	761,455	12.76%	99,167	3.23%
Առք ու վաճառքի համար նախատեսված արժեթղթեր	306,909	5.14%	753	0.02%
Պատրաստի ապրանք	244,668	4.10%	-	-
Երաշխիքներ	78,149	1.31%	78,320	2.55%
Ընդամենը	5,968,635	100%	3,078,588	100%

Վերը բերված աղյուսակում ներկայացված գումարներն իրենցից ներկայացնում են վարկերի հաշվեկշռային արժեքները և պարտադիր չէ, որ արտացոլեն գրավի իրական արժեքը:

Առևտրային ժամկետանց վարկերի դիմաց գրավադրված է անշարժ գույք: Առևտրային ժամկետանց վարկերի դիմաց գրավադրված է անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է վերջիններիս հաշվեկշռային արժեքներին՝ 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2008թ. ընթացքում Բանկը ձեռք չի բերել որևէ ակտիվներ՝ հանձն առնելով վերահսկողությունն առևտրային վարկերի դիմաց որպես ապահովություն ընդունված գրավի նկատմամբ (31 դեկտեմբեր 2007թ.՝ նման ակտիվներ ձեռք չեն բերվել):

Արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ առևտրային վարկերի տեսակների 2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Վարկեր խոշոր ընկերություններին	Վարկեր փոքր և միջին ընկերություններին	Ընդամենը
Վարկերի արժեզրկման գծով պահուստը առ 1 հունվարի	-	(40,169)	(40,169)
Վարկերի արժեզրկումից կորուստները տարվա ընթացքում	(7,675)	(124,313)	(131,988)
Տարվա ընթացքում դուրս գրված վարկեր	-	42,192	42,192
Վարկերի արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի	(7,675)	(122,290)	(129,965)

Անհատներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր				
- Ոչ ժամկետանց	1,677,515	(16,775)	1,660,740	1.0%
- Մինչև 30 օր ժամկետանց	11,530	(1,153)	10,377	10.0%
- 30-89 օր ժամկետանց	14,391	(4,317)	10,074	30.0%
- 90-179 օր ժամկետանց	2,017	(1,009)	1,008	50.0%
Ընդամենը սպառողական վարկեր	1,705,453	(23,254)	1,682,199	1.4%
Հիփոթեքային վարկեր				
- Ոչ ժամկետանց	1,512,826	(15,128)	1,497,698	1.0%
- Մինչև 30 օր ժամկետանց	29,573	(2,957)	26,616	10.0%
- 90-179 օր ժամկետանց	4,024	(2,012)	2,012	50.0%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	1,546,423	(20,097)	1,526,326	1.3%
Ավտոմեքենայի վարկեր				
- Ոչ ժամկետանց	1,047,070	(10,471)	1,036,599	1.0%
- Մինչև 30 օր ժամկետանց	106,264	(10,626)	95,638	10.0%
- 30-89 օր ժամկետանց	47,075	(14,123)	32,952	30.0%
- 90-179 օր ժամկետանց	24,218	(12,109)	12,109	50.0%
Ընդամենը ավտոմեքենայի վարկեր	1,224,627	(47,329)	1,177,298	3.9%
Վարկային քարտեր				
- Ոչ ժամկետանց	35,445	(354)	35,091	1.0%
- Մինչև 90 օր ժամկետանց	1,491	(167)	1,324	11.2%
Ընդամենը վարկային քարտեր	36,936	(521)	36,415	1.4%
Ընդամենը անհատներին տրված վարկեր	4,513,439	(91,201)	4,422,238	2.0%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն անհատներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկում հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկում %
Սպառողական վարկեր				
- Ոչ ժամկետանց	734,199	(7,342)	726,857	1.0%
- Մինչև 30 օր ժամկետանց	2,941	(294)	2,647	10%
- 30-89 օր ժամկետանց	15,696	(3,924)	11,772	25%
Ընդամենը սպառողական վարկեր	752,836	(11,560)	741,276	1.5%
Հիփոթեքային վարկեր				
- Ոչ ժամկետանց	1,023,683	(5,118)	1,018,565	0.5%
- Մինչև 30 օր ժամկետանց	14,022	(70)	13,952	0.5%
- 30-89 օր ժամկետանց	15,822	(79)	15,743	0.5%
- 90-179 օր ժամկետանց	2,221	(11)	2,210	0.5%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	1,055,748	(5,278)	1,050,470	0.5%
Ավտոմեքենայի վարկեր				
- Ոչ ժամկետանց	1,162,523	(9,300)	1,153,223	0.8%
- Մինչև 30 օր ժամկետանց	101,909	(10,507)	91,402	10%
- 30-89 օր ժամկետանց	63,374	(15,844)	47,530	25%
- 90-179 օր ժամկետանց	31,898	(15,949)	15,949	50%
- 180 - 270 օր ժամկետանց	18,597	(13,018)	5,579	70%
Ընդամենը ավտոմեքենայի վարկեր	1,378,301	(64,618)	1,313,683	4.7%
Վարկային քարտեր				
- Ոչ ժամկետանց	26,378	(264)	26,114	1.0%
- 30-89 օր ժամկետանց	42	(11)	31	25.0%
- 90-179 օր ժամկետանց	607	(304)	303	50.0%
- 180 - 270 օր ժամկետանց	1,198	(839)	359	70.0%
Ընդամենը վարկային քարտեր	28,225	(1,418)	26,807	5.0%
Ընդամենը անհատներին տրված վարկեր	3,215,110	(82,874)	3,132,236	2.6%

Անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը որոշելու համար օգտագործված հիմնական ենթադրությունը ոչ ժամկետանց վարկերի գծով վնասի 1% դրույքն է, որը հիմնված է անհատներին տրամադրված համանման վարկերի հետ կապված Բանկի փորձի և տվյալ ոլորտում գործող նմանատիպ բանկերի տվյալների վրա:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքը փոփոխվեր մեկ տոկոսով, անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով պահուստի գումարը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր/կաճեր 44,222 հազար դրամով:

Գրավի վերլուծություն

Սպառողական վարկերի դիմաց գրավադրվում է շարժական և անշարժ գույք: Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Ավտոմեքենաների վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: Վարկային քարտերը գրավով չեն ապահովվում:

Արժեզրկման գծով պահուստի շարժի վերլուծություն

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժն ըստ անհատներին տրված վարկերի տեսակների 2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	Սպառողակ. վարկեր	Հիփոթեք. վարկեր	Ավտոմեքեն. վարկեր	Վարկ. քարտեր	Ընդամենը
Վարկերի արժեզրկման գծով պահուստը առ 1 հունվարի	(11,560)	(5,278)	(64,618)	(1,418)	(82,874)
Վարկերի արժեզրկումից կորուստները տարվա ընթացքում	(20,480)	(14,819)	(11,619)	(1,079)	(47,997)
Տարվա ընթացքում որպես անհավաքագրելի դուրս գրված վարկեր	8,786	-	28,908	1,976	39,670
Վարկերի արժեզրկման գծով պահուստը առ 31 դեկտեմբերի	(23,254)	(20,097)	(47,329)	(521)	(91,201)

Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Առևտուր	3,675,136	1,428,780
Շինարարություն	858,153	680,029
Հանրային սնունդ և սպասարկման ոլորտ	565,206	208,656
Մննդի արդյունաբերություն	106,814	142,690
Հանքարդյունաբերություն	90,863	91,289
Տրանսպորտ և կապ	46,730	151,370
Գյուղատնտեսություն	15,020	23,627
Էներգետիկա	-	114,982
Անհատներին տրված վարկեր	4,513,439	3,215,110
Այլ	610,713	277,334
	10,482,074	6,333,867
Արժեզրկման գծով պահուստ	(221,166)	(123,043)
	10,260,908	6,210,824

Վարկային ռիսկի կենտրոնացում

2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ վարկառուներ կամ կապակցված վարկառուների խմբեր, որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում էին հաճախորդներին տրված ընդհանուր վարկերի 10%-ը:

18 Վաճառքի համար մատչելի ակտիվներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	39,921	313,916
ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր	-	570,121
	39,921	884,037
Ներդրումներ սեփական կապիտալում		
Կորպորատիվ բաժնետոմսեր	32,919	32,784
	72,840	916,821
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	540,109	-
ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր	-	199,586
	540,109	199,586

Որոշելի իրական արժեք չունեցող ներդրումներ

Սկզբնական արժեքով ներկայացված վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի ներդրումները ներառում են սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերը դրամական փոխանցումների և ֆինանսական ծառայությունների ոլորտներում: Այս ներդրումների համար գոյություն չունի գործող շուկա և վերջերս չի կատարվել որևէ գործարք, որը կվկայեր դրանց ներկա իրական արժեքների մասին: Ավելին, զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի կիրառման արդյունքում ձևավորվում են բազմատեսակ իրական արժեքներ՝ պայմանավորված ասպագա դրամական հոսքերի անորոշությամբ:

19 Հիմնական միջոցներ

հազ. դրամ

	Շենքեր	Հող	Տնտես. միջոցներ	Համակարգչ. և կապի սարք	Փոխադրա-միջոցներ	Այլ	Ոչ նյութակալիվ.	Վարձակ. հիմն. միջոցն. գծով կապ. ներդրումն.	Ընդամենը
Սկզբնական արժեք/Վերագնահատվ. արժեք									
Առ 1 հունվարի 2008թ.	779,373	400,000	157,772	301,597	44,448	54,117	168,165	30,928	1,936,400
Ավելացումներ	-	-	2,765	30,142	5,646	7,091	12,012	4,166	61,822
Օտարումներ/դուրս գրումներ	-	-	-	(3,082)	(3,970)	-	-	-	(7,052)
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	779,373	400,000	160,537	328,657	46,124	61,208	180,177	35,094	1,991,170

Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ

Առ 1 հունվարի 2008թ.	(29,173)	-	(146,407)	(201,855)	(14,076)	(39,430)	(71,186)	(677)	(502,804)
Մաշվածության ծախս	(20,680)	-	(4,660)	(31,015)	(6,982)	(5,153)	(17,831)	(2,752)	(89,073)
Օտարումներ/դուրս գրումներ	-	-	-	3,082	3,385	-	-	-	6,467
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	(49,853)	-	(151,067)	(229,788)	(17,673)	(44,583)	(89,017)	(3,429)	(585,410)

Հաշվեկշռային արժեք

Առ 31 դեկտեմբերի 2008թ.	729,520	400,000	9,470	98,869	28,451	16,625	91,160	31,665	1,405,760
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	750,200	400,000	11,365	99,742	30,372	14,687	96,979	30,251	1,433,596

հազ. դրամ

	Շենքեր	Հող	Տնտես. միջոցներ	Համակարգչ. և կապի սարք	Փոխադրա-միջոցներ	Այլ	Ոչ նյութակալիվ.	Վարձակ. հիմն. միջոցն. գծով կապ. ներդրումն.	Ընդամենը
Սկզբնական արժեք/Վերագնահատվ. արժեք									
Առ 1 հունվարի 2007թ. (Աուդիտ չանցած)	779,373	400,000	146,995	261,451	28,214	44,499	124,216	3,467	1,788,215
Ավելացումներ	-	-	10,777	40,175	16,234	9,618	43,949	27,461	148,214
Օտարումներ	-	-	-	(29)	-	-	-	-	(29)
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	779,373	400,000	157,772	301,597	44,448	54,117	168,165	30,928	1,936,400

Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ

Առ 1 հունվարի 2007թ. (Աուդիտ չանցած)	(41,408)	-	(144,515)	(176,392)	(7,914)	(37,636)	(58,490)	-	(466,355)
Մաշվածության ծախս	(20,196)	-	(1,892)	(25,463)	(6,162)	(1,794)	(12,696)	(677)	(68,880)
Վերագնահատում	32,431	-	-	-	-	-	-	-	32,431
Առ 31 դեկտեմբերի 2007թ.	(29,173)	-	(146,407)	(201,855)	(14,076)	(39,430)	(71,186)	(677)	(502,804)

Հաշվեկշռային արժեք

Առ 31 դեկտեմբերի 2007թ.	750,200	400,000	11,365	99,742	30,372	14,687	96,979	30,251	1,433,596
Առ 31 դեկտեմբերի 2006թ. (Աուդիտ չանցած)	737,965	400,000	2,480	85,059	20,300	6,863	65,726	3,467	1,321,860

Եթե շենքերի վերագնահատում չիրականացվեր, ապա շենքերի 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 729,520 հազար դրամ գումարով հաշվեկշռային արժեքը (31 դեկտեմբերի 2007թ.՝ 750,200 հազար դրամ) կլիներ 324,100 հազար դրամ (31 դեկտեմբերի 2007թ.՝ 333,550 հազար դրամ):

20 Այլ ակտիվներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Նյութեր և պաշարներ	16,426	19,916
Կանխավճարներ	7,756	9,927
Գրավի տնօրինման արդյունքում առաջացած ակտիվներ	3,804	82,833
Այլ	6,524	3,849
	34,510	116,525

21 Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Ժամկետային տեղաբաշխումներ ռեզիդենտ բանկերում	492,665	286,673
Ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների բանկային հաշիվներ	140,653	364,966
Լորո հաշիվներ	241	237
Օվերդրաֆտներ ոչ ռեզիդենտ բանկերից	-	9,715
	633,559	661,591

Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդների և մնացորդների կենտրոնացում

2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում տեղաբաշխված միջոցներ ունեին երկու և երեք բանկ ու ֆինանսական հաստատություն, որոնց մնացորդները գերազանցում էին բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ընդհանուր ավանդների և մնացորդների 10%-ը: 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 449,051 հազար դրամ և 553,909 հազար դրամ:

22 Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	997,857	895,872

Գրավադրված արժեթղթեր

2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրել էր որոշ արժեթղթեր (տես՝ Ծանոթագրություններ 15, 16 և 18):

23 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- Անհատներ	621,657	557,711
- Իրավաբանական անձիք	2,868,670	2,490,342
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	4,140,495	3,139,562
- Իրավաբանական անձիք	944,580	352,666
	8,575,402	6,540,281

Սառեցված հաշիվներ

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում պահվող հաճախորդների ավանդների և ընթացիկ հաշիվների 925,617 հազար դրամ գումարով մնացորդները (2007թ-ին՝ 400,968 հազար դրամ) Բանկի կողմից սառեցվել էին որպես գրավ տրամադրված վարկերի և արտահաշվեկշռային վարկային գործիքների դիմաց:

Հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների կենտրոնացում

2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ մեկ հաճախորդ, որի մնացորդը գերազանցում էր հաճախորդների ընդհանուր հաշիվների 10%-ը: 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդը կազմում էր համապատասխանաբար 1,225,467 հազար դրամ և 767,885 հազար դրամ:

24 Այլ պարտավորություններ

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Վճարվելիք շահութահարկ	29,862	19,135
Այլ վճարվելիք հարկեր	3,582	5,957
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	15,336	5,541
Այլ	29,704	23,139
	78,484	53,772

25 Հետաձգված հարկային պարտավորություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող արժեքների ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվել են սույն ֆինանսական հաշվետվություններում:

Այս նվազեցվող ժամանակավոր տարբերությունները, որոնք ուժի մեջ լինելու ժամկետ չունեն, ներակայացված են ստորև՝ հարկման արդյունքում ձևավորված կուտակային արժեքով:

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2008թ.	2007թ.	2008թ.	2007թ.	2008թ.	2007թ.
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	-	-	(793)	(703)	(793)	(703)
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	675	983	-	-	675	983
Հաճախորդներին տրված վարկեր	339	-	-	-	339	-
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	113	(779)	-	(779)	113
Հիմնական միջոցներ	947	-	(55,019)	(57,261)	(54,072)	(57,261)
Այլ պարտավորություններ	5,510	3,936	(2,190)	(2,080)	3,320	1,856
Ճանաչված զուտ հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	7,471	5,032	(58,781)	(60,044)	(51,310)	(55,012)

Հետաձգված հարկերի նկատմամբ կիրառվող հարկի դրույքը կազմում է 20% (2007թ-ին՝ 20%):

Համաձայն գործող օրենսդրության վերը նշված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը սահմանափակ չէ:

Ժամանակավոր տարբերությունների շարժը 2008թ. ընթացքում.

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2008թ.	Եկամտի կազմում ճանաչված	Մեփական կապիտալի կազմում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.
Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներ	(703)	(90)	-	(793)
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	983	(308)	-	675
Հաճախորդներին տրված վարկեր	-	339	-	339
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	113	(682)	(210)	(779)
Հիմնական միջոցներ	(57,261)	3,189	-	(54,072)
Այլ պարտավորություններ	1,856	1,464	-	3,320
	(55,012)	3,912	(210)	(51,310)

26 Բաժնետիրական կապիտալ և հետ գնված բաժնետոմսեր

Թողարկված կապիտալ

Հայտարարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 1,892,782 սովորական բաժնետոմսից և 737,127 արտոնյալ բաժնետոմսից: Թողարկված և վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 792,685 սովորական բաժնետոմսից (2007թ-ին՝ 734,621) և 237,464 արտոնյալ բաժնետոմսից (2007թ-ին՝ 237,464): Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 5,500 դրամ, արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը՝ 700 դրամ: 2008թ. ընթացքում թողարկվել է 58,064 սովորական բաժնետոմս (2007թ-ին՝ զրո) անվանական արժեքից 528.21 դրամ ավել արժեքով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ստանում են արտոնյալ բաժնետոմսերի քանակի և ընթացիկ տարվա շահույթի հիման վրա հաշվարկված փոփոխական շահաբաժիններ: Արտոնյալ բաժնետոմսերը քվեարկելու իրավունք չեն տալիս:

Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով: Համաձայն ՀՀ օրենսդրության հաշվետու ամսաթվի դրությամբ բաշխման ենթական պահուստները կազմում էին 803,461 հազար դրամ (2007թ-ին՝ 66,426 հազար դրամ):

27 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Բանկի հիմնական ռիսկերը կապված են շուկայական ռիսկի հետ, որը ներառում է գնային, տոկոսադրույքի և արտարժույթի ռիսկերը, ինչպես նաև վարկային ու իրացվելիության ռիսկերը:

Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկված է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Բանկի Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Բանկի Վարչությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու համար: Բանկի Գ-անձապետը պատասխանատվություն է կրում ռիսկերի ընդհանուր կառավարման և գործող օրենսդրության պահանջների հետ համապատասխանության վերահսկման, ինչպես նաև Բանկի գործունեության ընթացքում առաջացող ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման նպատակով ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառման ապահովման համար: Նա ուղղակիորեն հաշվետու է Գործադիր տնօրենին և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարչության կողմից: Որոշումների կայացման արդյունավետ գործընթաց ապահովելու նպատակով՝ Բանկը սահմանել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկի տեսակից ու գումարից:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի շահույթի կամ նրա պորտֆելների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, ներառյալ փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների, վարկային սպրեդերի և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և սեփական կապիտալի գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար ընդհանուր պատասխանատվություն է կրում Վարչությունը՝ Բանկի Գործադիր տնօրենի նախագահությամբ: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրենների խորհրդի կողմից:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում են և հաստատվում են Վարչության կողմից:

Շուկայական ռիսկի բաղկացուցիչ հանդիսացող տոկոսադրույքի ռիսկի կառավարումը, տոկոսադրույքների անհամապատասխանության վերահսկման միջոցով, լրացվում է տոկոսադրույքի մի շարք ստանդարտ և ոչ ստանդարտ սցենարների հանդեպ գուտ տոկոսային մարժայի զգայունության վերահսկմամբ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի շահույթի կամ ֆինանսական գործիքների նրա պորտֆելների արժեքի փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսված պարտավորություններից:

Գնային ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխության հանդեպ Բանկի շահույթի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային միավորով (բմ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2008թ. ու 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա, հետևյալն է.

հազ. դրամ	2008թ.		2007թ.	
	Շահույթ	Սեփական կապիտալ	Շահույթ	Սեփական կապիտալ
100 բմ զուգահեռ աճ	(16,631)	(16,631)	414	414
100 բմ զուգահեռ նվազում	16,631	16,631	(414)	(414)

Վերը ներկայացված դրամական միջոցների զգայունության վերլուծությունը չի ներառում ոչ տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները, որոնք հիմնականում բաղկացած են այն սահմանաչափը չգերազանցող հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների մնացորդներից, որը գերազանցելու դեպքում Բանկը վճարում է սակագներով սահմանված տոկոսներ:

Իրական արժեքի զգայունության վերլուծություն

Ստորև ներկայացվում է Բանկի շահույթի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը պայմանավորված տոկոսադրույքի փոփոխության արդյունքում իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների (որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում) և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ՝ հիմք ընդունելով տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերը 2008թ. ու 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 100 բազիսային միավորով (բմ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարը:

հազ. դրամ	2008թ.		2007թ.	
	Շահույթ	Սեփական կապիտալ	Շահույթ	Սեփական կապիտալ
100 բմ զուգահեռ աճ	(10,218)	(11,283)	(16,827)	(19,676)
100 բմ զուգահեռ նվազում	10,218	11,283	16,827	19,676

Վերը նշվածն ենթադրում է, որ վաճառքի համար մատչելի ակտիվները Բանկի կողմից կպահվեն մեկ տարի ժամկետով՝ սկսած հաշվետու ամսաթվից:

Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ծանոթագրություններ 15-ում և 37-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն տարեվերջի դրությամբ արտարժույթի ռիսկին Բանկի ենթարկվածության մասին:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հանդեպ Բանկի տարվա շահույթի և սեփական կապիտալի զգալունության վերլուծությունը, որն իրականացվել է 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և ԱՄՆ դոլարի ու դրամի փոխարժեքի 5% փոփոխության պարզեցված սցենարի հիման վրա, հետևյալն է.

հազ. դրամ	2008թ.		2007թ.	
	Շահույթ	Սեփական կապիտալ	Շահույթ	Սեփական կապիտալ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 5% արժեվորում դրամի հանդեպ	(8,300)	(8,300)	(9,184)	(9,184)
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 5% արժեզրկում դրամի հանդեպ	8,300	8,300	9,184	9,184

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ հաշվեկշռային և թե՛ արտահաշվեկշռային) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը, որն ակտիվորեն վերահսկում է Բանկի վարկային ռիսկը: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկի վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- ընդունելի գրավի պահանջները,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկավորման համար նախընտրելի տնտեսության ոլորտները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների կողմից ներկայացվող վարկի դիմումները մշակվում են վարկավորման բաժնի աշխատակիցների կողմից և փոխանցվում են Վարկավորման բաժնի ղեկավարին, որը պատասխանատու է առևտրային վարկային պորտֆելի համար: Այս բաժնի վարկային մասնագետների կողմից պատրաստված հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական վիճակի վրա: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ հիմնվելով Վարկավորման բաժնի կողմից ներկայացված առաջարկների վրա: Առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի Իրավաբանական բաժնի կողմից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է կամ անկախ գնահատողների, կամ Բանկի մասնագետների կողմից: Շուկայական գների բացասական շարժի դեպքում վարկառուից որպես կանոն պահանջվում է լրացուցիչ արժեքների գրավադրում:

Անհատների կողմից ներկայացվող վարկի դիմումները ուսումնասիրվում են Մանրաձախ ոլորտի վարկավորման բաժնի կողմից՝ դիմումի տվյալների ստուգման ընթացակարգերի միջոցով:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Վարկավորման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում հաշվապահական հաշվեկշռում ֆինանսական ակտիվների, երաշխիքների և վարկային պարտավորվածությունների հաշվեկշռային արժեքներում, որոնք ներկայացված են Ծանոթագրություն 29-ում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի հնարավոր վարկային ռիսկի նվազման վրա:

Բանկը վերահսկում է վարկային ռիսկի կենտրոնացումն ըստ արդյունաբերության ճյուղերի/ոլորտների: Հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխատվությունների գծով վարկային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 17-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր»:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ՝ իր պարտավորվածությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ու տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է ֆինանսական հաստատությունների, ներառյալ Բանկի կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը սովորական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների անորոշ ժամկետներով և տարաբնույթությամբ: Դա հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հիմնական հաճախորդների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի վարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքերին վերաբերող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացվում են Վարչության կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Բանկը հաշվարկում է նաև իրացվելիության պարտադիր ցուցանիշներն օրական կտրվածքով՝ ՀՀ կենտրոնական բանկի պահանջների համաձայն: 2008թ. և 2007թ. ընթացքում Բանկի իրացվելիության ցուցանիշները համապատասխանում էին սահմանված պահանջներին:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների չգեղջված հոսքերը Բանկի ֆինանսական պարտավորությունների և չճանաչված վարկային պարտավորվածությունների գծով՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չգեղջված հոսքերը ֆինանսական պարտավորությունների կամ պարտավորվածությունների գծով: Այս ֆինանսական պարտավորությունների և չճանաչված վարկային պարտավորվածությունների գծով Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերը կարող են էականորեն տարբերվել այս վերլուծությունից:

*«Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

Բանկի դիրքը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն էր.

	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդհանուր համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	359,014	-	49,354	239,899	-	648,267	633,559
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	999,628	-	-	-	-	999,628	997,857
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,366,673	169,398	1,010,619	584,036	2,933,721	9,064,447	8,575,402
Այլ պարտավորություններ	46,579	1,011	30,791	-	103	78,484	78,484
Ընդամենը	5,771,894	170,409	1,090,764	823,935	2,933,824	10,790,826	10,285,302
Վարկային պարտավորվածություններ	942,627	-	-	-	-	942,627	942,627

Բանկի դիրքը 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն էր.

	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդհանուր համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	494,749	10,326	-	164,795	-	669,870	661,591
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	896,345	-	-	-	-	896,345	895,872
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	3,406,865	991,389	812,402	930,832	601,880	6,743,368	6,540,281
Այլ պարտավորություններ	32,298	2,028	18,295	-	1,151	53,772	53,772
Ընդամենը	4,830,257	1,003,743	830,697	1,095,627	603,031	8,363,355	8,151,516
Վարկային պարտավորվածություններ	489,751	-	-	-	-	489,751	489,751

Ծանոթագրություն 36-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն իրացվելիության ռիսկին
Բանկի ենթարկվածության վերաբերյալ:

28 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային հաստատությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում էր 12%: 2008թ. և 2007թ. ընթացքում Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

29 Պարտավորվածություններ

Բանկը մշտապես ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկեր, վարկային քարտերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների և պայմանական պարտավորությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում ներկայացված երաշխիքների և ակրեդիտիվների գումարներն արտացոլում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չիրականացնեն իրենց կողմից ստանձնած պարտավորությունները:

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	673,364	382,316
Օվերդրաֆտների չօգտագործված մնացորդներ	269,263	107,435
Երաշխիքներ	145,199	61,118
Ակրեդիտիվներ	-	152,110

Վարկավորելու վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները չեն ենթադրում դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունների մեծամասնությունը կարող է ուժը կորցնել կամ դադարել գործել նախքան վերջիններս տրամադրելը:

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերը ներկայացված պարտավորվածություններից 263,082 հազար դրամ գումարով պարտավորվածությունները ստանձվել էին երկու ընկերությունների նկատմամբ:

30 Պարտավորվածություններ գործառնական վարձակալության գծով

Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	22,022	24,978
Մեկից հինգ տարի ժամկետով	82,929	86,380
Ավելի քան հինգ տարի ժամկետով	70,589	91,800
	175,540	203,158

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է հինգից տասն տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Սովորաբար վարձակալական վճարներն աճում են տարեկան կտրվածքով՝ շուկայական պայմանների փոփոխություններն արտացոլելու նպատակով:

31 Պայմանական դեպքեր

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկն ամբողջությամբ ապահովագրված չէ շենքերի և սարքավորումների վնասների, գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Բանկի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Բանկը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

Բանկի ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր իրավասու մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինները կարող են սահմանել պարտավորություններ լրացուցիչ հարկերի, տույժերի կամ տուգանքների գծով խախտումից միայն երեք տարի անց:

Այս հանգամանքները կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել Հայաստանի Հանրապետությունում: Բանկի ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները Բանկի ֆինանսական վիճակի համար կարող են լինել էական, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Վերահսկողություն

Բանկը չունի վերջնական վերահսկող կողմ: Բանկի բաժնետերերի կազմը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում:

Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում ներառված ընդհանուր վարձատրությունը (Ծանոթագրություն 11):

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Տնօրենների խորհրդի անդամներ	31,495	36,510
Վարչության անդամներ	81,078	59,809
	112,573	96,319

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդներն ու միջին արդյունավետ տոկոսադրույքները 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2008թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2007թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր	53,044	12%	9,277	12%
Պարտավորություններ				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	63,428	9%	25,757	4%

Ստորև ներկայացված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ	1,615	596
Տոկոսային ծախս	3,047	684

Գործարքներ բաժնետերերի և այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են.

- Բաժնետերերի և Վարչության անդամների ընտանիքի անդամներին
- Բաժնետերերի և Վարչության վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններին

Ստորև ներկայացված են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի և այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները, համապատասխան միջին տոկոսադրույքները և 2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր		Ընդամենը
	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք	հազ. դրամ
Հաշվապահական հաշվեկշիռ					
Ակտիվներ					
Հաճախորդներին տրված վարկեր					
- Հիմնական մնացորդ	-	-	146,123	14%	146,123
- Արժեզրկման գծով պահուստ	-	-	(1,461)	-	(1,461)
Պարտավորություններ					
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	666,735	9%	1,502,026	2%	2,168,761
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն					
Տոկոսային եկամուտ	26	-	16,759	-	16,785
Տոկոսային ծախս	35,592	-	17,665	-	53,257
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,741	-	4,248	-	5,989
Ընդհանուր և վարչական ծախսեր	-	-	20,400	-	20,400

Ստորև ներկայացված են 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետերերի և այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները, համապատասխան միջին տոկոսադրույքները և 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Այլ կապակցված կողմեր		Ընդամենը
	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք	հազ. դրամ
Հաշվապահական հաշվեկշիռ					
Ակտիվներ					
Հաճախորդների տրված վարկեր					
- Հիմնական մնացորդ	7,182	16%	108,173	14%	102,356
- Արժեզրկման գծով պահուստ	(7)	-	(1,082)	-	(1,089)
Պարտավորություններ					
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	311,601	6.2%	1,192,506	0.6%	1,440,770
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն					
Տոկոսային եկամուտ	7	-	849	-	856
Տոկոսային ծախս	4,308	-	6,348	-	10,656
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	1,446	-	1,760	-	3,206
Ընդհանուր և վարչական ծախսեր	-	-	11,333	-	11,333

33 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Տարեվերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

	2008թ. հազ. դրամ	2007թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ	292,482	312,845
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ – նոստրո հաշիվներ	1,157,508	822,523
Բանկերում տեղաբաշխված միջոցներ – նոստրո հաշիվներ	164,636	317,677
Հանած սահմանափակումներով նոստրո հաշիվները	-	(152,110)
	1,614,626	1,300,935

34 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները ներկայացված են ստորև՝ ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ. Բացահայտում» ստանդարտի պահանջների համաձայն:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ ստորև ներկայացվածների, էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկան դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի զեղչման դրույքը:

Ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 18-ում, 32,919 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (2007թ-ին՝ 32,784 հազար դրամ) սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէր որոշել:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ ակտիվների անմիջական վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

35 Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները ու վերջիններիս համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքներն այդ ամսաթվերի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի միջին եկամտաբերությունը:

	Արժեք հազ. դրամ	2008թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք	Արժեք հազ. դրամ	2007թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք
Տոկոսակիր ակտիվներ				
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ				
- ՀՀ դրամ	28,575	19.0%	-	-
- ՀՀ դրամ	932	-	1,392	-
- ԱՄՆ դոլար	220,298	8.7%	106,510	3.7%
- ԱՄՆ դոլար	511,741	-	286,742	-
- այլ արտարժույթ	203	2.2%	-	-
- այլ արտարժույթ	8,522	-	197,626	-
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում				
- ՀՀ դրամ	706,668	8.0%	1,066,035	6.7%
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ				
- ՀՀ դրամ	571,691	8.8%	1,106,305	7.3%
Հաճախորդներին տրված վարկեր				
- ՀՀ դրամ	6,948,882	17.4%	4,367,590	17.8%
- ԱՄՆ դոլար	3,188,564	15.1%	1,778,987	15.6%
- այլ արտարժույթ	123,462	16.0%	64,247	16.0%
Վաճառքի համար մատչելի ակտիվներ				
- ՀՀ դրամ	580,030	8.9%	1,082,456	6.2%
Տոկոսակիր պարտավորություններ				
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ				
- ՀՀ դրամ	588,413	7.0%	423,975	3.5%
- ՀՀ դրամ	11,070	-	56,518	-
- ԱՄՆ դոլար	30,673	9.0%	162,512	3.0%
- ԱՄՆ դոլար	1,028	-	6,374	-
- այլ արտարժույթ	-	-	12,212	4.2%
- այլ արտարժույթ	2,375	-	-	-

*«Չարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

	<u>Արժեք հազ. դրամ</u>	<u>2008թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք</u>	<u>Արժեք հազ. դրամ</u>	<u>2007թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք</u>
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ				
- ՀՀ դրամ	997,857	7.3%	895,217	5.8%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ				
<i>Ժամկետային ավանդներ</i>				
- ՀՀ դրամ	1,924,698	9.2%	1,618,700	8.8%
- ԱՄՆ դոլար	2,470,453	9.6%	1,720,663	8.1%
- այլ արտարժույթ	689,924	7.5%	152,861	4.8%
<i>Ընթացիկ հաշիվներ և ցրտահանջ ավանդներ</i>				
- ՀՀ դրամ	1,374,325	1.0%	1,773,837	1.0%
- ՀՀ դրամ	392,975	-	419,291	-
- ԱՄՆ դոլար	368,561	0.5%	325,789	0.5%
- ԱՄՆ դոլար	110,901	-	340,699	-
- այլ արտարժույթ	1,194,811	0.5%	135,735	0.5%
- այլ արտարժույթ	48,754	-	52,706	-

36 Ժամկետայնության վերլուծություն

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների պայմանագրով նախատեսված մինչև մարումն ընկած ժամանակահատվածն առ 31 դեկտեմբերի 2008թ.: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի համաձայն ժամկետային ավանդներն ենթակա են ելքագրման ցանկացած պահի: Քանի որ Բանկի ֆինանսական գործիքների զգալի մեծամասնությունը հանդիսանում է ֆիքսված դրույքով պայմանագրեր, պայմանագրային մարման ժամկետներն իրենից ներկայացնում են նաև տոկոսադրույքի վերանայման ժամկետները:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3 ամսից 1 տարի հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	Ավելի քան 5 տարի հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ	292,482	-	-	-	-	-	-	292,482
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	1,157,508	-	-	206,904	-	-	-	1,364,412
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	686,423	1,102	4,975	36,518	-	41,253	-	770,271
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	480,725	72,388	33,145	145,420	37,311	-	-	768,989
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	571,691	-	-	-	-	-	-	571,691
Հաճախորդներին արված վարկեր	1,186,794	764,704	2,174,420	5,889,193	179,220	-	66,577	10,260,908
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	580,030	-	-	-	-	32,919	-	612,949
Հիմնական միջոցներ	-	-	-	-	-	1,405,760	-	1,405,760
Այլ ակտիվներ	6,406	2,292	5,580	-	-	20,232	-	34,510
Ընդամենը ակտիվներ	4,962,059	840,486	2,218,120	6,278,035	216,531	1,500,164	66,577	16,081,972
Պարտավորություններ								
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	358,628	-	274,931	-	-	-	-	633,559
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	997,857	-	-	-	-	-	-	997,857
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,366,303	162,465	1,520,239	2,521,624	4,771	-	-	8,575,402
Այլ պարտավորություններ	46,579	1,011	30,791	-	-	103	-	78,484
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	51,310	-	51,310
Ընդամենը պարտավորություններ	5,769,367	163,476	1,825,961	2,521,624	4,771	51,413	-	10,336,612
Չուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2008թ.	(807,308)	677,010	392,159	3,756,411	211,760	1,448,751	66,577	5,745,360
Կուտակային գուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2008թ.	(807,308)	(130,298)	261,861	4,018,272	4,230,032	5,678,783	5,745,360	
Չուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2007թ.	(2,115,925)	350,072	371,304	4,295,272	254,356	1,493,050	15,838	4,663,967
Կուտակային գուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2007թ.	(2,115,925)	(1,765,853)	(1,394,549)	2,900,723	3,155,079	4,648,129	4,663,967	

Աղյուսակում նշված գումարները ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ամսաթվի դրությամբ և չեն ներառում տոկոսագումարների ապագա վճարումները:

«Ժամկետանց» սյունակում ներառվում է ֆինանսական գործիքների պայմանագրով ժամկետանց մասը:

Ղեկավարությունը գտնում է, որ չնայած ժամկետից շուտ ելքագրման հնարավորության և այն փաստի, որ հաճախորդների հաշիվների մեծամասնությունը ցպահանջ է, հաճախորդների այս հաշիվների դիվերսիֆիկացումն ըստ ավանդատուների քանակի և տեսակի, ինչպես նաև Բանկի փորձը վկայում են առ այն, որ հաճախորդների այս հաշիվներն ապահովում են ֆինանսավորման երակարածամկետ և կայուն աղբյուր:

37 Ակտիվները և պարտավորություններն ըստ արժույթների

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>ՀՀ դրամ հազ. դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար հազ. դրամ</u>	<u>Այլ արտարժույթ հազ. դրամ</u>	<u>Ընդամենը հազ. դրամ</u>
Ակտիվներ				
Գրանական միջոցներ	194,442	49,453	48,587	292,482
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	375,038	765,544	223,830	1,364,412
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	29,507	732,039	8,725	770,271
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	711,033	-	57,956	768,989
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	571,691	-	-	571,691
Հաճախորդներին տրված վարկեր	6,948,882	3,188,564	123,462	10,260,908
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	611,814	-	1,135	612,949
Հիմնական միջոցներ	1,405,760	-	-	1,405,760
Այլ ակտիվներ	33,376	119	1,015	34,510
Ընդամենը ակտիվներ	<u>10,881,543</u>	<u>4,735,719</u>	<u>464,710</u>	<u>16,081,972</u>
Պարտավորություններ				
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	599,483	31,701	2,375	633,559
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	997,857	-	-	997,857
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	3,691,998	2,949,915	1,933,489	8,575,402
Այլ պարտավորություններ	61,355	5,723	11,406	78,484
Հետաձգված հարկային պարտավորություն	51,310	-	-	51,310
Ընդամենը պարտավորություններ	<u>5,402,003</u>	<u>2,987,339</u>	<u>1,947,270</u>	<u>10,336,612</u>
Չուտ հաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2008թ.	5,479,540	1,748,380	(1,482,560)	5,745,360
Չուտ արտահաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2008թ.	352,740	(1,914,390)	1,561,650	-
Չուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2008թ.	<u>5,832,280</u>	<u>(166,010)</u>	<u>79,090</u>	<u>5,745,360</u>
Չուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2007թ.	4 858,321	(184,863)	(9,491)	4,663,967

38 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2009թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ դրամն արժեզրկվեց մոտավորապես 20%-ով ի համեմատություն ԱՄՆ դոլարի: Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս արժեզրկումն էական ազդեցություն կունենա Բանկի գործունեության արդյունքների վրա: